

<b>10.</b>	<b>ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ PEDAGOGY AND PSYCHOLOGY ПЕДАГОГИЧЕСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ НАУКИ</b>
------------	--

### **ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԻԴԱԿՏԻԿԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐ**

**Յ. Յ. ՕՐԱՆՅԱՆ**

*Մանկավարժ. գիտութ. թեկնածու, դոցենտ*

Կրթությունը մեր կյանքի ամենաբարդ բնագավառներից է և կենսագործվում է գործունեության «մարդ-մարդ» ուղիով, որը լեցուն է միջանձնային բազում հարաբերություններով: Նույնը վերաբերում է նաև սովորողների մի զգալի մասի սոցիալ-տնտեսական, տարիքային ու անհատական առանձնահատկությունների հաշվառմանը՝ չանտեսելով արդի ժամանակների արագ փոփոխվող ազդեցությունը: Նոր ժամանակները պահանջում են ուսուցիչ-աշակերտ ավանդական հարաբերությունների նորովի զարգացում՝ կարևորելով ուսումնառության ընթացքում վերջիններիս ակտիվության բարձրացումը: Միաժամանակ նկատելի է առանձին մանկավարժական գաղափարների նորովի վերլուծության ու մեկնաբանման անհրաժեշտությունը: Չնայած գիտատեխնիկական հեղափոխություն արդի փուլում մշակվել և մշակվում են մանկավարժական նոր տեխնոլոգիաներ, բայց դժվարացել են սովորողներին ուսման մեջ ներգրավելու գործընթացները: Ձանգվածային տեղեկատվական աղբյուրների (մամուլ, հեռուստատեսություն, հեռախոս, համակարգիչ) տարաբնույթ տեղեկատվությունը չի կարող իր օգտակար ազդեցության հետ մեկտեղ բացասական ներգործություն չունենալ սովորողների վրա զբաղվածության, առողջապահական, դաստիարակչական և այլ առումներով: Դպրոցականները հիմնականում անշրջահայաց և զգացմունքային լինելով հանդերձ՝ զգայուն են ամեն մի տեղեկատվության նկատմամբ: Տարաբնույթ տեղեկատվության այսօրվա հորձանուտում, առավել քան երբեք, կարևորվում է ուսուցչի մանկավարժական վարպետության խնդիրը:

Ուսուցիչներն իրենց մեթոդամանկավարժական և մասնագիտական կարողություններով պետք է կարողանան հաղթահարել ծագած դժվարությունները: Այս պայմաններում բարձրացել է համագործակցային, աշակերտակենտրոն ուսուցման անցման ահրաժեշտությունը: Իհարկե, այս մոտեցման արմատները պատմականորեն կարելի է փնտրել դեռևս ֆրանսիական մեծ լուսավորիչ ժամակա Ռուսոյի ժամանակներում, որը ուսուցման նպատակ էր համարում երեխային կյանքի համար նախապատրաստելը: Իսկ շվեյցարիացի մանկավարժ Յո-

հան Պեստալոցին ուսուցման մեջ կարևորել է զգացմունքայնության դերը, երեխային բարությանը շրջապատելը: Քսաներորդ դարի սկզբին Մարիա Մոնտեսորին ուսուցման մեջ օգտագործեց իմացական խաղերը: Նույն մոտեցումը լայնորեն նկատվել է անցյալ դարի ամերիկյան մանկավարժական տարբեր համակարգերում (սովորողների հետաքրքրությունների հաշվառում): Անկասկած, երեխայի իմացական ակտիվության խթանմամբ ընթացող ուսուցումը նկատելի արդյունավետ է, քան նրան «պատրաստի» գիտելիքներ հաղորդելու ավանդական ուսուցման եղանակները:

Ահա թե ինչու ուսուցման և դաստիարակության գործընթացների կազմակերպման հարցերում նոր մեթոդաբանական մոտեցումների ներդրումը իրեն զգացնել է տալիս:

«Ուսուցում» հասկացությունը ամենաընդհանուր գծերով սահմանվում է որպես սովորողներին գիտելիքներով, կարողություններով, հմտություններով գինելու, նրանց աշխարհայացքը ձևավորելու, զարգացնելու գործընթաց: «Ինչպե՞ս ուսուցանել», «Ինչպե՞ս կազմակերպել», «ու՞մ ուսուցանել» և այլ ավանդական դիդակտիկական հարցադրումներ ստացել են արդիական հնչեղություն: Իր ժամանակին Յ. Ա. Կոմենսկու առաջադիմական դիդակտիկական հայացքները հեղափոխիչ ազդեցություն ունեցան և պատահական չէ, որ մեծ տարածում գտան ամբողջ աշխարհում որպես ուսուցման կազմակերպման համամարդկային մեթոդաբանություն՝ կապված զանգվածային ուսուցման իրականացման հարցի հետ: Նա կարևորեց համահարթեցված մոտեցումը միամակարդակ սովորողների խմբի հետ (դասարան): Այսօր պետք է կարողանալ պահպանել կոլեկտիվ ուսուցումը, մյուս կողմից՝ այն զուգացկել յուրաքանչյուր սովորողի մտավոր կարողությունների ու հակումների հաշվառման հետ:

Քանի որ ուսումնական խմբի անդամների ընդունակություններն ու հետաքրքրությունները տարբեր են լինում, ուստի նրանց ուսումնական ձեռքբերումներն էլ նույնը լինել չեն կարող: Այս կապակցությամբ մանկավարժ Օ. Գ. Գրոխլսկայան պնդում է՝ «Այսպիսով, դիդակտիկական պետք է լուծի այն հարցը, թե ինչպես անհատականացնել ուսուցումը»: Բնականաբար առաջնային պլան են մղվում ուսուցման մեթոդների աշակերտակենտրոն ուղղվածության բարձրացման հարցերը:

«Մեթոդ» բառն ունի հունական ծագում (մեթոդոս) և նշանակում է ուղի, եղանակ և կիրառվում է գիտության ու արտադրության տարբեր բնագավառներում: Առանց մեթոդների իմացության դժվար է իրականացնել որևէ արդյունավետ գործունեություն: Նույնը վերաբերում է ուսուցման մեթոդներին, որոնցով իրականացվում է ուսուցման բարդ ու բազմաբովանդակ գործընթացը:

*Ուսուցման մեթոդներ են կոչվում ուսուցչի և աշակերտների փոխհամաձայնեցված գործողությունների եղանակները՝ ուսումնական խնդիրներ լուծելու նպատակով:*

Ուսուցման մեթոդներն անցել են պատմական զարգացման երկարատև ուղի: Սկզբնական շրջաններում օգտագործվել է ուսուցման դասախոսության մեթոդը (գրույցը): Այն XVI դարում քննադատվել է, քանի որ բնության երևույթների ուսումնասիրությունը կատարվում է առանց դիտումների: XIX դարում գիտության և տեխնիկայի զարգացմանը զուգընթաց ծագել է ուսուցման տարբեր եղանակ-

ների զուգակցման գաղափարը: Ըստ ամերիկյան մանկավարժ Կ. Քերրիի՝ ուսուցման մեթոդներն անցել են պատմական զարգացման 4 շրջան, երբ.

- ծնող-ուսուցչին փոխարինեց մասնագետ ուսուցիչը,
- բանավոր խոսքը փոխարինվեց գրավոր խոսքով,
- ձեռագիր խոսքը փոխարինվեց տպագիր խոսքով,
- ուսուցումը ավտոմատացվեց, համակարգչայնացվեց:

Այսպիսով, մարդու ուսումնափնացական գործունեության ուղին անցել է պատմական զարգացման երկար ճանապարհ, որը նպաստել է ուսուցման մեթոդների կատարելագործմանը: Այս գործընթացը շարունակվում է և այսօր: Չկա և չի կարող լինել ուսուցման մեկ-երկու «կատարյալ մեթոդներ», որոնցով հնարավոր լինի ապահովել ուսուցման արդյունավետություն, քանի որ յուրաքանչյուր մեթոդ պետք է հարմարեցնել որոշակի մանկավարժական խնդիրների լուծման համար: Մեթոդների ձևակերպումն իր մեջ ներառում է ուսուցչի, կամ աշակերտների գործունեության տեսակը. մի դեպքում կոչվում են *դասավանդման*, իսկ մյուս դեպքում՝ *ուսման* մեթոդներ: Ուսուցման մեթոդներին բնորոշ են օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմեր, միևնույն մեթոդը տարբեր պայմաններում, տարբեր մանկավարժների օգտագործմամբ կարող է ապահովել տարբեր արդյունավետություն:

Ավանդաբար ուսուցման մեթոդները դասակարգվել են ըստ գիտելիքների ձեռքբերման աղբյուրի՝ խոսքային, զննական, գործնական, որոնք վերջին շրջանում համալրվել են դասագրքով աշխատելու և համակարգչային մեթոդներով: Մեթոդների դասակարգման հարցում միասնական մոտեցում գոյություն չունի: Տարբեր մանկավարժներ այդ հարցին մոտենում են տարբեր տեսանկյունից: Օրինակ, Ե. Յա. Գոլանդը մեթոդները դասակարգելիս նկատի է ունեցել սովորողների ակտիվության աստիճանը՝ պասիվ և ակտիվ մեթոդներ:

Առավել տարածված է ըստ սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպման բնույթի մեթոդների դասակարգումը (Մ. Ն. Սկատկին, Ի. Յա. Լերներ).

- բացատրական-ցուցադրական,
- վերարտադրողական,
- պրոբլեմային շարադրանք,
- մասնակի որոնողական (էվրիստիկ),
- հետազոտական:

Այս դասակարգումը իր մեջ ներառում է մեթոդների երեք խմբեր. պասիվ, ակտիվ և փոխներգործուն (ինտերակտիվ):

*Պասիվ* մեթոդների դեպքում դասի վարման ընթացքում ուսուցչին վերագրվում է ակտիվ դեր (բացատրական-ցուցադրական, վերարտադրողական ուսուցում և այլն): Գործընթացն ունի ուսուցիչ-աշակերտ ավանդական ուղղվածություն:

Ուսուցիչը զբաղվում է գիտելիքների հաղորդմամբ, սովորողների գնահատմամբ, նրանց տնային, ստուգողական, ինքնուրույն գրավոր աշխատանքներում ներգրավելու հարցերով և այլն: Չնայած պասիվ մեթոդները ոչ միշտ են նպաստում ուսուցման արդյունավետության բարձրացմանը, բայց ուսուցիչը կարողանում է կարճ ժամանակամիջոցում մեծ ծավալի թեմաներ մատուցել սովորողներ-


րին: Դասի արդյունավետության բաժրացումը հիմնականում պայմանավորված է ուսուցչի աշխատանքով (թե որքանով է կարողանում նպաստել սովորողների իմացական ակտիվության բարձրացմանը):

*Ակտիվ մեթոդների դեպքում ուսուցիչը և աշակերտները երկուստեք կարողանում են փոխազդել միմյանց վրա, սովորողներն ակտիվորեն մասնակցում են գիտելիքների ձեռքբերման գործընթացին, որն ունի ոչ միայն ուսուցիչ-աշակերտ, այլև հակադարձ ուղղվածություն: Օրինակ, պրոբլեմային, մասնակի որոնողական, հետազոտական մեթոդները համարվում են ակտիվ, որոնք սովորողների համար ապահովում են գիտելիքների ձեռքբերման գործելու ընթացակարգ:*

*Մասնակի-որոնողական մեթոդը դասվում է պրոբլեմային մեթոդների թվին և նպաստում է սովորողների մտածողության զարգացմանը: Նրանք գիտելիքները ձեռք են բերում ոչ «պատրաստի» վիճակով, այլ ուսուցչի ղեկավարությամբ՝ կատարելով որոնողական աշխատանքներ: Ուսուցիչը բացատրում է պրոբլեմի էությունը, նրա և աշակերտների միջև ծավալվում է ակտիվ զրույց: Մեթոդը կոչվում է մասնակի-որոնողական, քանի որ սովորողներն առանց ուսուցչի օգնության միշտ չէ, որ կարող են լուծել ուսումնական բարդ առաջադրանքներ: Մեթոդը գործում է ուսուցիչ-աշակերտ-ուսուցիչ-աշակերտ շարունակ զարգացող ընթացակարգով, որին հաջորդում են եզրահանգումները:*

*Յետազոտական մեթոդը համարվում է առավել արդյունավետ: Սովորողներին նախապես գիտելիքներ չի հաղորդվում: Յետազոտության բոլոր փուլերը սովորողներն անցնում են ինքնուրույնաբար՝ հավաքագրելով տարբեր փաստեր: Այդ ընթացքում նրանք (անհատապես և խմբերով) կատարում են դիտումներ, լաբորատոր փորձեր, աշխատում գրքերով, այլ միջոցներով: Այն նպաստում է գիտելիքների ինքնուրույն ձեռքբերմանը: Որպես թերություն պետք է համարել այն, որ իրեն զգացնել է տալիս ուսուցչի և աշակերտների կողմից ծախսվող ժամանակի նկատելի չափը: Մեթոդը ուսուցչից մեծ ջանք ու եռանդ է պահանջում, մանկավարժական տեխնիկա, որպեսզի նա կարողանա կազմակերպել տարբեր կարողությունների տեր սովորողների ինքնուրույն-հետազոտական աշխատանքը: Նրանք հանդես են գալիս միմյանց սովորեցնելու դերում:*

*Փոխներգործուն մեթոդներն ակտիվ մեթոդների արդիական տեսակներ են (դիդակտիկական խաղեր), որոնք ուղեկցվում են ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխազդեցությամբ: Տեսական ու գործնական առաջադրանքները կատարվում են սովորողների մասնակցությամբ, նրանց ճանաչողական գործունեությամբ:*



Փոխներգործուն մեթոդներին ամենաընդհանուր գծերով կարելի է վերագրել հետազոտական ուղղվածություն, որոնք ապահովում են սովորողների կողմից գիտելիքների ձեռքբերման գործնական ընթացակարգ: Այսօր գերակա խնդիր է դարձել սովորողների կողմից միմյանց սովորել սովորեցնելը:

Գնալով մեթոդների նոր համակարգը մեծ տարածում է ստանում:

*Ինտերակտիվ կամ փոխներգործուն* մեթոդները ունեն որոշակի առանձնահատկություններ: Այս դեպքում աշակերտը՝

- մասնակցում է նյութի ձեռքբերման գործընթացին,
- հենվում է ոչ այնքան իր հիշողության, որքան ինքնուրույն գործելու վրա,
- մասնակցում է ինչպես խմբային, այնպես էլ անհատական ուսումնական աշխատանքների,
- ձեռք է բերում մյուսների հետ համագործակցելու, հաղորդակցվելու կարողություններ, սովորում է նրանցից,
- աշակերտի համար ստեղծվում է ինքնակրթության բարենպաստ միջավայր, ինչպես նաև գիտելիքները կյանքում կիրառելու հնարավորություն:

Տարբերվում են *խթանման, գիտելիքների յուրացման, նյութի անփոփման* և այլ մեթոդները (հնարները):

1. *Խթանման մեթոդներ* – մտազրոհ, խմբավորում, պրիզմա, ձևակույտ, մտածիր-զույգ՝ կազմիր-քննարկիր և այլն:

2. *Գիտելիքների յուրացման մեթոդներ* – T-աձև աղյուսակ, գաղափարների քարտեզ, Վենի դիագրամ, փոխգործուն նշանների աղյուսակ, բանավեճ, զրույց, համառոտ դասախոսություն, խորանարդում, խճանկար, զբոսանք պատկերասրահում, երեք բանալի՝ մեկ կողպեք, կարուսել և այլն:

3. *Դասի անփոփման համար հարմար մեթոդներ* - քառաբաժան, խորանարդում և այլն:

Ուսուցման ինտերակտիվ մեթոդների օգտագործման օգտին են խոսում հետևյալ քանակական ցուցանիշները: Գիտելիքների մտապահման հարցում տարբեր մեթոդներ ու հնարներ զնահատվում են համապատասխանաբար՝ լսել-20%, տեսնել-30%, լսել և տեսնել-50%, տեսնել, լսել և խոսել-80%, լսել, տեսնել, խոսել և կատարել-90% արդյունավետություն և այլն:

Նկատենք, որ ուսուցման նոր մեթոդների օգտագործումը ուսուցչից պահանջում է նախապատրաստական, կազմակերպչական և կատարողական մեծ ջանք, հակառակ դեպքում ձևական մոտեցումը կարող է հանգեցնել ցածր արդյունքի, քան կապահովեր ավանդական մոտեցումը:

Ումանց մոտ իշխում է այն թյուր կարծիքը, թե իրենց դարձնալ են ուսուցման ավանդական մեթոդները, մոռանալով, որ նորը կառուցվում է հնի հիման վրա:

Օրինակ, զրույցը որպես ուսուցման մեթոդ ու հնար օգտագործվել է դեռևս հին հունական փիլիսոփա Սոկրատեսի կողմից և իր արդյունավետությամբ զարդարում է բոլոր մեթոդական համակարգերը: Ուսուցման ինտերակտիվ մեթոդներն ավանդական մեթոդների գործնական դրսևորումներն են (ինացական խաղեր) և չպետք է տարանջատել դրանք միմյանցից: Յուրաքանչյուր դաս ուսուցչի ստեղծագործական աշխատանք է և չպետք է նա գտնվի հին ու նոր մեթոդների ձևական փնտրտուքի մեջ: Ժամանակակից դասը պետք է ընթանա ուսուցման

ավանդական ու նոր հնարների միահյուսմամբ: Չպետք է մոռանալ, որ ուսուցիչների հնարավորություններն ու կարողությունները տարբեր են, տարբեր են նաև նրանց հակվածությունը մեթոդական հնարների օգտագործման հարցերում: Պարզապես, ուսուցման փոխներգործուն մեթոդները օգտակար են սովորողների ինչպես մտավոր, այնպես էլ զգացական ոլորտների զարգացման առումով, իսկ զգացմունքայնությունը ուսուցման մեծ խթան է: Աշակերտների համար հնարավորություն է ընձեռվում սովորել սեփական սխալների հիման վրա, զբաղվել ինքնակրթությամբ, հաղորդակցվել մյուսների հետ և այլն:

Գոյություն չունեն ուսուցման մեթոդների օգտագործման կոնկրետ հրահանգներ, քանի որ յուրաքանչյուր դաս անկրկնելի ստեղծագործական գործընթաց է՝ կախված թեմայի, սովորողների, ուսուցչի, առկա հնարավորությունների առանձնահատկություններից և այլն:

#### НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ ДИДАКТИКИ

*Գ. Դ. ՕԳԱՆՅԱՆ*

В статье рассматриваются некоторые проблемы дидактики, связанные с традиционными и современными методами обучения.

#### SOME PROBLEMS OF MODERN DIDACTICS

*Գ. Դ. ՕԳԱՆՅԱՆ*

This article explores some problems of didactics related to traditional and modern methods of teaching.

### ԱՌՏԻՍՏԻԿ ԱԽՏԱՆԻՇՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՉԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐՈՒՄ

**Լ. Ն. ՔՈՒՐԵՉՅԱՆ**

*Մանկավարժական գիտությունների թեկնածու*

**Լ. Ս. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

*ԳՊՉ դասախոս*

Դեռևս անցած դարի 80-ական թվականներին նյարդաբանները սկսեցին խոսել «աուտիզմ» համախտանիշի մասին, որը նյարդա-հոգեկան խեղաթյուրում է առաջացնում անձի հոգեկանում, ախտահարում է ուղեղի համապատասխան հատվածները, ինչի արդյունքում խնդիրներ են առաջանում շրջակա միջավայրի ընկալման, սոցիալիզացիայի, վերբալ հաղորդակցման և մի շարք այլ ոլորտներում: